ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

_____N _____
Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Կից՝ Ձեզ եմ ներկայացնում «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագրի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին» համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) փոփոխություն կատարելու և Համաձայնագրում ներկայացված 3 ֆինանսական կատեգորիաները 1 կատեգորիայում միավորելու նպատակով Լրացուցիչ համաձայնագրի հաստատման կամ վավերացման նպատակահարմարության վերաբերյալ հիմնավորում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝ Մարիա Աղաջանովա
ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ
Հեռ.՝ 010 29-75-36

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կայունացման և Զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» 2018 թվականի ապրիլի 3-ի դրամաշնորհային համաձայնագրին կից թիվ 2 լրացուցիչ համաձայնագրի

Առողջապահության նախարարությունը ներկայում իրականացնում է Կայունացման և Զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Դրամաշնորհային ծրագիր)։ Հայաստանի Հանրապետությունում ոչ վարակիչ հիվանդությունների՝ մասնավորապես կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելմանն ուղղված 1 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ Դրամաշնորհային ծրագրի Համաձայնագիրը ստորագրվել է 03.04.2018թ. և ուժի մեջ է մտել 21.09.2018թ.։

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ սահմանամերձ 3 մարզերում՝ Լոռում, Տավուշում և Սյունիքում իրականացնել կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություններ կանանց 50-69 տարիքային խմբում՝ ապահովելով առնվազն 50% ընդգրկվածություն։

Ներկա պահին, սքրինինգային ծրագրերի իրականացման նպատակով, արդեն իսկ գնվել և մատակարարվել է շարժական մամոգրաֆիայի սարքավորումը։ Ծրագրում ընդգրկված ազգաբնակչությանը ծրագրի վերաբերյալ հնարավորինս տեղեկացնելու նպատակով իրականացվում են հանրային իրազեկման քարոզարշավի մի շարք նախապատրաստական աշխատանքներ։ Մեկնարկել են ծրագրում ընդգրկված բժշկական անձնակազմի վերապատրաստման աշխատանքները, նախապես մշակված հետազոտությունների վարման ընթացակարգերի և գործառնական ձեռնարկների հիման վրա։

Հայտնում եմ, որ սքրինինգային հետազոտությունները կարող են մեկնարկել, այնուամենայնիվ, կապված երկրում հայտարարված ռազմական դրությունը, դրանք հետաձգվել են։

Հաշվի առնելով ծրագրի իրագործման սեղմ ժամկետներն ու առաջնորդվելով դրամաշնորհային գումարների ծախսման արդյունավետության սկզբունքով, Առողջապահության նախարարությունը դիմել է Դրամաշնորհային Համաձայնագրով նախատեսված 3 ծախսային կատեգորիաները 1 կատեգորիայում միավորելու առաջարկով։

Նշվածի հիմքում ընկած է հետևյալը. փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր անցկացված մրցույթից հետո անհրաժեշտություն է առաջանում իրականացնել տնտեսված կամ անհրաժեշտ գումարների վերաբաշխում մեկ ծախսային կատեգորիայից մյուսը։ Սակայն նշված տեսակի փոփոխությունները անխուսափելիորեն առաջացնում եմ Դրամաշնորհային Համաձայնագրի փոփոխության անհրաժեշտություն, ինչը, որպես կանոն, կարող է տևել նվազագույնը 3-6 ամիս։ Տվյալ դեպքում առկա է մեծ ռիսկ, որ վերաբաշխումների իրականացման ներկայում կիրառվող գործընթացը հնարավորություն չի տա մինչև ծրագրով նախատեսված դրամական միջոցների հասանելիության ավարտն ամբողջությամբ ծախսել դրանք։ Այսպիսով, նշված առաջարկն առավել ճկուն կդարձնի ծրագրի իրագործման և կառավարման մեխանիզմները, հնարավորություն տալով հասնել առավելագույն արդյունքի։

Կատեգորիաների միավորման կապակցությամբ կմշակվի և կներդրվի վերաբաշխումների իրականացման, Դրամաշնորհատուի հետ համաձայնեցման և հաշվետվողականության խիստ մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռնի ի սկզբանե գնահատել առաջարկվող վերաբաշխման նպատակահարմարությունն, իսկ, այնուհետև նաև, վերահսկել միջոցների ծախսման ուղղությունները։

Դրամաշնորհային Համաձայնագրում առաջարկվող փոփոխությունը հնարավորություն կտա հասնելու առավելագույն արդյունավետության ծրագրի իրագործման տեսանկյունից՝ նպաստելով ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հնարավորինս նպատակային ծախսմանը։